26 Մայիս.- Ղարաբաղի Կոմիտէի 11 անդամները, որոնք անցեալ Դեկտեմբեր 10էն ի վեր բանտարկուած կը մնային Մոսկուայի մէջ, Թեր փաստուած յանձանքներով Երեւան հասան անմիջապէս որ ազատ արձակուեցան։

Այս որոշումը, որ կ'ընդգրկէ Սովետ Միութեան բոլոր քաղաքական բանտարկեալները, առնուեցան Սովետ Գերագոյն Խորհուրդի վերջին նիստին։

Բայց եւ այնպէս Լեւոն Մանուչարեան եւ Իգոր Մուրատեան կը շարունակեն բանտարկուած մնալ, առանց գիտնալու պատճառը։

Տեղին է նշել թէ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը անցեալ Ցունուարին, կազմակերպեց համաշխարհային արշաւ մը, հեռագիրներով, պահանջելով Գրեմլինի թիւ մէկ ղեկավարէն՝ Ղարաբաղի Կոմիտէի բոլոր անդամներու ազատ արձակումը, նոյն գիծը որդեգրեցին տարբեր քաղաքական կուսակցութիւններ, ինչպէս նաեւ, միջազգային երեւելի անձնաւորութիւններ։



Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.-ի

Համատեղ Հաղորդագրութիւնը

Ս. Էջմիածինէն հրատարակութեան խնդրանքով ստացանք ստորեւ համատեղ հաղորդագրութիւնը, ուր կ'առաջնորդուի նաեւ Մեծ Եղեռնի մեր մարտիրոսներուն սրբադասումը՝ ի շարս Հայց. Եկեղեցւոյ տօնելի սուրբերուն:

Գոհունակութիւն Աստուծոյ, որ մենք՝ Ս.Ս. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Ս.Ս. Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, վերստին ողջագուրուելիք հայրենի հողի վրայ, Փրկչին մեր Յիսուս Քրիստոսի Իջման Սուրբ Տաճարի կամարների տակ եղբայրական սիրով, մէկս միւսին վշտակից եւ մխիթարիչ, այն դժուար օրերին, որ ապրում է մեր Եկեղեցին եւ ժողովուրդը, անցեալ Դեկտեմբերի 7ին Հայաստանում տեղի ունեցած աւերիչ երկրաշարժի հետեւանքով:

Թող Տէրը օգնական մնայ աղէտեալ վշտահար մեր ազգի զաւակներին եւ զօրացնի նրանց Սուրբ Հոգով ու մշտանորոգ եռանդով, որպէսզի մօտ ապագայում վերաշինուեն մեր քանդուած քաղաքներն ու գիւղերը, հայրենի պետութեան ծրագրած մեծածաւալ շինարարական իրագործումներով ու արտասահմանի հայութեան, քոյր Եկեղեցիների եւ բարեկամ բազում ժողովուրդների առատաձեռն օժանդակութիւններով:

Ցաւում Հայաստանեայց Եկեղեցու բոլորին մեր խորազգաց շնորհակալութիւնն ենք յայտնում:

Ինչպէս այս տարի Փետրուարի սկզբին Նիւ Եորքում, այժմ Մենք մի անգամ եւս կոչ ենք ուղղում Սփիւռքի մեր Եկեղեցիներին ու բոլոր հայկական կազմակերպութիւններին, որ շուտափոյթ կերպով իրենց լիազօր ներկայացուցիչներն ուղարկեն Հայաստան եւ վերաշինութեան պատասխանատու պետական մարմնի հետ համախորհուրդ, ճշդեն իրենց օգնութեան առարկան եւ այն ի կատար ածեն առաջիկայ ամիսներին:

Մեր սրտագին իղձն է, որ համազգային այս ծանր մտահոգութեանց օրերին, շարունակի անսասան ու անխառն մնալ այն միասնութեան ոգին՝ մէկ Եկեղեցի, մէկ ազգութիւն, մէկ մայր հայրենիք նշանաբանով, որ առաջ ամրապնդուեց Մեր հանդիպումներով ու գործակցութեամբ Մայր Հայրենիքում, անցեալ Դեկտեմբերի մեծ աղէտից անմիջապէս յետոյ եւ ապա Նիւ Եորքում այս տարի Փետրուարին, ամերիկահայոց հանգանակութեան Մեր օրհնութիւնները բաշխելու առթիւ:

Մեր ժողովրդի համար բախտորոշ այս շրջանում Մենք պատասխանատուութեան զգացումով հրամայական ենք նկատում համագործակցութեան ճառագումը եւ սերտացումը Մայր Աթոռին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի միջեւ՝ եկեղեցական, հոգեւոր, կրթական, ազգային-մշակութային կեանքի մակարդակների վրայ, յոյժ ցանկալի գտնելով նաեւ եղբայրական փոխադարձ սիրոյ ու գործակցութեան ոգու ամրապնդումը Սփիւռքի մեր Եկեղեցու ամբողջ տարածքի վրայ, նաեւ քարոզչական գործառոյթի որոշ շրջաններում թեմական հարցերի:

Որով, Մենք մի անգամ եւս հաստատում ենք եւ առնում մեր Եկեղեցու հառատացեալ համայն ժողովրդին ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի՝ թէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մէկ ու անբաժան ազգային Եկեղեցի է, մէկ ու անբաժան ներիրապետական կառոյցով, խարխափած Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքի վրայ եւ պատմականօրէն ներիրագործուած մօտ 1700 տարիներից ի վեր:

Ապրիլեան այս օրերին, երբ գտնում ենք անմոռաց յիշատակի առաջ 1915ի հայոց ցեղասպանութեան անմեղ զոհերի, Մեր աղօթքը առաջում ենք առ Աստուած, որ լուսաւոր պահի նրանց հոգիները արդարների աշխարհում եւ մխիթարի մեր Եկեղեցու եւ ազգի զաւակներին Սուրբ Հոգով ու նաեւ զօրացնի նրանց սրտերը, որպէսզի բոլորը՝ անխտիր, քաջանայք եւ ժողովուրդ, հաւատարիմ մնան մեր նահատակների ուխտին եւ նրանց անժամանցելի կտակին:

Գոհունակութեամբ ողջունում ենք նաեւ մեր հայրենի պետութեան որոշումը, որով Ապրիլի 24ի թուականը պաշտօնապէս յայտարարուում է 1915ի հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր:

Տրուած լինելով, որ յառաջիկայ տարին 70ամեակն է մեր նահատակների զոհաբերման, առաջադրում ենք մինչեւ 1990 թուականի ապրիլ ամիսը ճարկ եղած նախապատրաստական աշխատանքները յառաջ տանել, իրականացնելու համար նրանց սրբադասումը, ի շարս տօնելի սրբոց Եկեղեցւոյն Հայաստանեայց:

Մեծ Եղեռնի ոգեկոչումի այս օրերին, մեր նահատակները մեր վրայ սրբազան պարտք են դնում Մեր հայրական աղերսը եւ հրաւէրը ուղղել հայրենաբնակ Մեր զաւակներին, որ չտարուեն խարուսիկ երազանքներով ու չհեռանան Մայր Հայրենիքից: Հայութիւնը կարող է ապրել ու գոյատեւել որպէս ազգութիւն միայն իր մայր երկրի տարածքի վրայ, անբաժան հարազատ հողից, իր լեռներից ու աստղերից, մշտահաղորդ իր արմատներին:



Սփիւռքի հայութիւնը ոյժ եւ նեցուկ է մեր ժողովրդին այնքան ժամանակ, ինչքան հայաստանցիք ամուր կառչած են մնում իրենց ազգի մայր հողին ու այնտեղ աճեցնում իրենց համրաքը, զարգացնում իրենց տնտեսութիւնը եւ ազատօրէն ծաղկեցնում իրենց հայադրոշմ մշակոյթը, միշտ հաւատարիմ իրենց ոգեկանութեան ակունքներին, յատկապէս Արարատի նայուածքի տակ:

Մեր իղձն է նաեւ, որ Խորհրդային Միութեան մէջ սկիզբ առած վերակառուցման ու ժողովրդավարութեան ողջունելի ընթացքը, պակասի բարենորոգիչ արդար իրագործումներով, մարդու եւ ազգութիւնների իրաւունքների ամրապնդման ոգով, որով մեր ազգային հանրապետութիւնը եւս ապրի շինարար զարգացում եւ խաղաղ ծաղկում Խորհրդային Միութեան ազգութիւնների համերաշխ ընտանիքում:

Այսօր պարտք ենք զգում Մեր խոր ցաւը արտայայտել, վերջին երկու ամիսներին տեսնելով Լիբանանի հայ ժողովրդի կրած ծանր հարուածը, լիբանանցի միւս համայնքների հետ միասին, շարունակուող ռմբակոծութիւնների հետեւանքով: Հրաւիրում ենք մեր ժողովրդին աղօթելու Լիբանանի կռիւների դադարման, խաղաղութեան վերստեղծումի եւ բնականոն պայմանների վերահաստատման համար, միաձգամայն զօրավիգ կանգնելու լիբանանահայ մեր հաւատացեալ զաւակների վերականգնման կենսական գործին:

Ապրիլի 26 եւ 27ի օրերին Մեր շքախմբերի անդամներով, անհուն գոհունակութեամբ ոտքի գնացինք Սիւնեաց աշխարհի մեր պատմական վանքերը. միասեղ աղօթելով Նորավանքում (ԺԳ. դար), Սիսիանի Ս. Յովհաննէս եկեղեցում (7րդ դար) եւ Տաթեւի վանքում (Ը. դար):

Այդ օրերին հոգեկան մխիթարութեան ու հրճուանքի անմոռանալի պահեր ապրեցինք Եղեգնաձոր, Սիսիան ու Գորիս քաղաքների հրապարակներում, որտեղ Մեզ ցնծութեամբ դիմաւորեցին մեր ժողովրդի զաւակները տասնեակ հազարներով, տեղի քաղաքային իշխանութեանց ներկայութեամբ:

Թող բարին Աստուած քաղցրութեամբ ընդունի Մեր աղօթքները եւ պահի պահպանի անսասան ու ծաղկեալ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին, մեր հայրենի պետութիւնը եւ համայն հայ հաւատաւոր ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, միշտ համազգային միասնութեան, համերաշխ գործակցութեան ու խաղաղութեան մէջ:

«Ծառէ ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր եւ զամենայն գործս առաքինութեան». Ամէն:

Restaurant

COLBEH MELAHAT

Colbeh

en irani, significa un pequeño lugar que suma los sentidos: hogar, pequeña casa, nido humilde, recinto acogedor, refugio de la amistad y del amor.
Esta es la COLBEH de MELAHAT

Av. del Libertador 13.041, Martínez
Reservas: 793-3955

WILTON PALACE HOTEL

Av. Callao 1162
Tel. 41-9483

Buenos Aires
Argentina

ՅԱՒԱԿԱԳՈՒԹԻՒՆ

Ցաւով իմացանք գոյժը Ողբ. Աւետ Փոլատեանի մահուան, որ պատահեցաւ Նիւ Ծրսի (ԱՄՆ)ի մէջ:

Այս տխուր առիթով՝ ՌԱԿի Հարաւ Ամերիկայի Շրջ. Վարչութիւնը Թ.Մ.Մ.ի Հարաւ Ամերիկայի Շրջ. Վարչութիւնը եւ «ՍԱՐՏԱՐԱԳԱՑ» իրենց խորագոյց ցաւակցութիւնները կը յայտնեն Ընկեր Անդրանիկ Փոլատեանի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Եդ Հիմն ի Վերայ Վիմի»...

…«Կը նմանի այն մարդուն, որ տուն շինեց, խորունկ փորեց եւ հիմը դրաւ վէմի վրայ։ Ողողում մը եղաւ, գետն յարձակեցաւ այն տանը վրայ եւ չի կրցաւ զայն երերցնել, վասնզի վէմի վրայ հաստատուած էր»… (Ղուկաս 6-48)։

Աւետարանէն վերի այլաբանական մէջբերումը հոս կը գործածենք իր տառացի իմաստով. խօսքը կը վերաբերի Հայաստանի աւերեալ շրջաններուն վերաշինութեան աշխատանքներուն։

Դեկտեմբեր 7ի չարաղէտ երկրաշարժէն ետք, որ արհաւրալի դարձուց մեր ժողովուրդը եւ հարուածեց անոր բարոյական կորովը, ամենայետին հայն իսկ տեղեակ եղաւ, որ մեր հայրենիքին մէջ, եւ ի մասնաւորի երկրաշարժէն ցնցուած շրջաններուն, վերջին տասնամեակներուն քաղաքաշինութեան եւ շինարարական ահաւոր եւ աններելի սխալներ գործուած էին. անհեռատես ծրագրում, բարձրայարկ աւազուտ կառոյցներ, ոճրային անփութութիւն եւայլն: Ամէն հայու հոգիին խորը, սակայն, կը ծնէր ոգեւորող յոյսը, թէ ապագան այլեւս երբեք պիտի չնմանի անցեալին, եւ ժողովուրդին ներկան ու անոր ապագան շահագրգռող հարցերուն մէջ ամենադոյզն սխալը իսկ պիտի չարտօնուի: Այլ խօսքով՝ մեր ապագան մե՛նք է որ պիտի կառուցանենք, եւ զայն հաստատենք ամուր վէմի վրայ, որպէսզի մեր տունը մնայ անսասան, բարոյական եւ ֆիզիքական իմաստով, ամէն յորձանքի դէմ եւ կամ՝ ողողումի պարագային:

Արդէն առաջին տարակոյսները սկսած են բոյն դնել մեր մէջ, երբ նկատի ունինք Լենինականի վերակառուցման վիճելի ծրագիրը, որ կը թուի թէ արդէն պետական վաւերացումի արժանացած է:

Շրջանէ մը ի վեր հայրենի մամուլին մէջ կը հետեւինք պատմական Գիւմրիուն զարգացման տեղամասին ընտրութեան շուրջ ծագած բանավէճին, ուր հայրենի գիտնականները, ջախջախիչ մեծամասնութեամբ, դէմ էին ծրագրի մը, որ կը թուէր «վերին մարմիններուն» նախընտրութիւնը ըլլալ: Այսօր, մեր այս թիւով ունինք նաեւ տեսակէտը արտասահմանի հայ գիտնականի մը, երկրաշարժի երիտասարդ մասնագէտ Փրոֆ. Միսաք Եղիայեանի, որ վերջերս Հայաստան գացած էր ուսումնասիրական առաքելութեամբ:

Երկու ծրագիրներէն մէկը կը նախատեսէ Լենինականի շինութիւնը յառաջացնել դէպի հիւսիս Արեւմուտք, Մարմաշէն գիւղի ուղղութեամբ, ուր երկրաշարժային ճեղք յառաջացած է: Այդ շրջանը կը գտնուին Հայաստանի ամենէն թանկագին վարելահողերը՝ մշակելի հողերով այնքան աղքատ Հայաստանի: Այդ սեւ հողերը, որոնց մէկ հեկտարը կ’արժէ 119,700 ռուբլի, կուտան սերմացու ցորենի բարձր բերք: Ենթահողի միայն 6–10 մեթր հաստատութեամբ ծածկոյթին տակ ըկ գտնուին գետային նըստուածքներ եւ լճային կաւերու մեծ շերտեր: Շրջանը ունի կտրուածքներ, որոնց երկարութեամբ տեղի կ’ունենան մնայուն ցնցումներ: Թէ քաղաքաշինութեան համար որքա՛ն աննպաստ է շրջանը՝ կը բաւէ օրինակ բերել 350 տուն ունեցող Մարմաշէնը, ուր երկրաշարժին հետեւանքով 100 տուներ մասնակիօրէն կամ լրիւ քանդուեցան, իսկ 183 ուրիշ տուներ կը գտնուին վնասուած վիճակի մէջ:

Երկրորդ ծրագիրը կը նախատեսէ իջնել դէպի հարաւ արեւելք, Արեւիկ եւ Այգաբաց գիւղերուն միջեւ, որուն ենթահողը ունի մինչեւ 120 մեթր պազալդ կամ այլ տոկուն ժայռերու հզօր շերտեր: Գետնաջուրերը կը գտնուին մեծ խորութեամբ, մինչեւ 60–80 մեթր: Այդ շրջանին մէջ երկրաշարժային ձեւափոխումներ չեն հաստատուած եւ երկրաշարժային հետեւանքները համեմատաբար տկար են: Դեկտեմբեր 7ի երկրաշարժին Արեւիկ գիւղին մէջ լրիւ քանդուած տուներ չեն արձանագրուած, միայն մասնակիօրէն քանդուած են կրաքարային շաղախով կառուցուած հին տուները: Բաց աստի, այդ շրջանի հողերուն 30 տոկոսը պիտանի չէ, մնացեալին բերքը ցած է, իսկ այդ հողամասին հեկտարն ալ կ’արժէ 56,000–80,000 ռուբլի: Շրջանը հնարաւորութիւն կուտայ բարձրացնելու բարձրայարկ շէնքեր:

Առաջին ծրագիրին իրագործումին պարագային, քաղաքը միաձոյլ պիտի դառնայ, իրարու մօտ, իրարու կապուած՝ ուղղահայեաց ճամբաներով, իսկ շինարարութիւնը պիտի իրագործուի յարաբերաբար աժան միջոցներով: Անելի դիւրին եւ աժան է հողը փորել, քան ժայռը քանդել: Հետեւաբար այդ ծրագիրին պաշտպանները գլխաւորաբար կ’առաջնորդուին ժամանակի եւ փինանսական շահագրգռութեամբ, առաջարկելով որ հարաւ արեւելք զարգացման պարագային Լենինական պիտի չունենայ կեդրոնացած քաղաքի տեսքը, այլ պիտի նմանի արբանեակներու շարքի մը:

Քաղաքաշինութեան վերջին խօսքը կը պատկանի երկրաբանութեան, ի մասնաւորի երկրաշարժային երկրի մը մէջ: Նկատի պէտք է առնուի, ի մասնաւորի երկրաշարժային 100,000 զոհ տուած փոքրաթիւ ժողովուրդի մը պարագային՝ միայն շինութիւններուն ամրութիւնը: Ու կարելի չէ հասկնալ ինչո՞ւ Լենինական պէտք է դառնայ երկրորդ Երեւան մը, որ ինքնին մեծ սխալի մը վտանգալից արդիւնքն է:

Խ. Միութեան Նախագահ Միխայիլ Կորպաչով երբ 1988 Դեկտեմբերին աւերեալ Հայաստանը այցելեց, խոստացաւ երկու տարիէն վերակառուցանել ամբողջ շրջանը վերջնական երեւոյթով: Խորհրդային ղեկավարին յայտարարութիւնը պէտք է մեկնաբանել միայն աւելի քան կէս միլիոն դժբախտ ժողովուրդին երդիք մը տալու որպէս ազնիւ ցանկութիւն: Կորպաչով ոչ երկրաչափ է, եւ ոչ ալ քաղաքաշինութեան մասնագէտ մը: Անոր խօսքերը պէտք չէ առնուին տառացի եւ մեքենական իմաստով: Թող որ անկարելի է որեւէ մէկ պարագայի երկու տարիէն վերակառուցանել այնքան համատարած աւերակ շրջանները:

Այնպէս կը թուի, որ նոր Լենինականի տեղի ընտրութեան բուն պատասխանատուները հայ գիտնականներ չեն, կը տեսնուի նաեւ թէ տնտեսական եւ այլ ժամանակաւոր նկատումներ գերիվեր նկատուած են գիտական եւ մնայուն լուծումներէն: Յունուարի կիսուն, Երեւանի մէջ վարչապետ Ռիժքովի նախագահութեամբ գումարուած ժողովին երբ արծարծուած է Լենինականի զարգացման խնդիրը, խորհրդային վարչապետը ըսած է. «Դուք էք որ այստեղ պիտի ապրիք, եւ դուք էք որ պիտի առնէք որոշումը»:

Եթէ հա՛յն է որ պիտի առնէ իր տնաշինութեան որոշումը, ուրեմն ինչպէ՞ս պատահեցաւ, որ Հայաստանի ղեկավարութիւնը առնէ սխալ որոշում մը, որ ճակատագրական է հայ ժողովուրդին համար: Ինչպէ՞ս երկրաշարժէն վերապրող ժողովուրդ մը «կարելի է վերաբնակեցնել, նոյնիսկ միայն 2–3 յարկանի տուներու մէջ, որոնք կառուցած պիտի ըլլան աւելի փխրուն հողի վրայ, քան այն գետինը, որուն վրայ կառուցուած էր փլած Լենինականը», հարց կուտայ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի թղթակից-անդամ Գէորգ Տէր Ստեփանեան:

Ո՛չ ոքի թոյլ տրուած է խաղալ այս ժողովուրդին բախտին հետ: Դժբախտաբար արդէն ամէն օր միլիոնաւոր ռուբլի արժող հողեր կը փորուին դէպի հիւսիս-արեւելք: Պէտք է ամէն գնով դադրեցնել այս կորուստը:

Ինչպէս իր հետ մեր տեսակցութեան ընթացքին Փրոֆ. Միսաք Եղիայեան կը յանձնարարէ, կարեւոր է որ նման յոյժ կենսական հարցի մէջ անխոհեմ եւ անկշռադատ արագ քայլեր չառնել: Պէտք է ժամանակ տալ, որ նախ գիտութիւնը ըսէ իր վերջին խօսքը, ու ապա մեծ թափով վերսկսիլ շինարարութիւններուն: Մինչ այդ, սակայն, պէտք է աշխատիլ ապահով եւ պատշաճ ժամանակաւոր երդիքի մը տակ պատսպարել անօթեւան բազմութիւնները:

(ՇԱՐ.Ը 12-ՐԴ ԷՋ)

50 վերապրողներ դարմանումի պիտի երթան Նիւ Եորք

Նախաձեռնութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի եւ Մետիքըլ Աութրիչի

Հայաստանի երկրաշարժէն վերապրող 50 վիրաւորներու նոր խումբ մը Երեւանէն հասաւ Ամերիկա, Չորեքշաբթի Մայիս 17ին, Նիւ Եորքի Քենետի Միջազգային Օդանաւակայանը, PAN AM-*ի Թռիչք* 91-*ով*։

Օդակայան դիմաւորելու համար ներկայ էին Նիւ Եորքի շրջանէն բժշկական խումբ մը, տեղական պաշտօնատարներ եւ կամաւոր աշխատաւորներ, որոնցմէ իւրաքանչիւրը պիտի ստանձնէ դարմանուող անձի մը հոգատարութիւնը, մինչեւ հիւանդին Հայաստան վերադարձը։

Ամերիկա եկող ամենէն մեծաթիւ հիւանդներու խումբն է ասիկա, նախապէս եկող վիրաւորներու եւ հաշմանդամներու խումբը բաղկացած կ’ըլլար 7–14 հոգիներէ։

Ցիսուն հոգիներէն կէսը բաղկացած է անչափահասներէ։ Վերապրողները պիտի ենթարկուին ոսկորային, գեղագիտական կամ այլ գործողութիւններու։ Պէտք ունեցողներուն համար յատուկ պիտի շինուին արուեստական անդամներ, որոնք պատրաստի գոյութիւն չունին աշխարհի մէջ որեւէ մէկ տեղ։

Հիւանդները հոգացող 99 կամաւորներուն այս առթիւ ջամբուած է մասնաւոր դասընթացք մը։ Անոնց նշանաբանն է.– «Պիտի Լանք – Աւարտէն Ետք» ("We will not cry - until later")...

Նման խնամքի կարօտ հայ վիրաւորներուն դարմանումը պիտի շարունակուի։ Հ.Բ.Ը. Միութեան Կեդր. Վարչութեան Գործադիր Փոխ-նախագահ Տիկ. Լուիզ Սիմոնի յայտարարութեամբ, նախատեսուած է Միացեալ Նահանգներու հիւանդանոցները փոխադրել հարիւր վիրաւոր վերապրողներ։

agasajos
banquetes
menu a la cart

COMIDAS ARTESANALES
ARMENIAS
INSTITUTO PRIVADO MARIE MANOOGIAN
PROMOCION 1989

viernes 21 hs
comidas p/llevar
postres orientales

los invitamos a cenar en un ambiente familiar

armenia 1322
773-2820 · 772-2617 · 982-1253 · 551-7768 · 432-7448
reservas

Արտագաղթ

Գէորգ Դեւրոկեան

Սրտաճմլիկ մի երգ կայ.
Մըր խոր պապկէ
գերեզման
Թողի հոնտեղ, կիզամ ման,
Ոտիս կէնի բեռան տակ,
Ասվտա, դժուար ա
վատակ...

Գանդուխն է երգել, որ ստիպուած է եղել յանուն վատակի հեռանալ տանից ու սիրելիների չիրիմներից։ Զգիտեմ, աղջիկը լսե՞լ էր այս երգը։ Հաճիւ թէ, չէ՞ որ այժմ առաւել մոդային երգեր կան, չէ՞ որ ստալինեան դաժան տարիներին մարդիկ վախենում էին նման երգերից, ինչ է, թէ յանկարծ չմեղադրուեն մեղքերից ծանրագոյնի՝ նացիոնալիզմի մէջ։ Իսկ այդ երգերը նաեւ դաստիարակութեան միջոց էին։ Եւ չատ լաւ է, որ տարիներ յետոյ կրկին վերածնուեցին, սակայն ոմանց համար արդէն մոռա զարձաւ եւ ոչ էութիւն, ինչպէս նախկինում էր։ Այդպէս է, կապն ու հարազատութիւնն ընդհատուել միշտ էլ տխուր բաների է յանգեցնում, սարսափելի բաների եւ դրանցից ամենասարսափելին այսօրուայ արտագաղթն է։ Այդպէս է, այդ ամէնը մի մեծ չղիայ է եւ մի օղակի կորուստը կարող է չատ վատ բաների յանգեցնել, վնասել եւ միւս օղակները։ Ասելւ այն է, թէ այսօր իսլուր ենք ուչք վատակում օտարամուտ չատ բաների առնլեւ, որոնք յանգեցնում են ապազգայնացմանը, ազգային արժէքների թերագնահատմանը, ժողովրդական արմատներից հեռանալուն։

Իսկ հենց այդ ժողովրդական առողջ արմատներն են, որ կենսունակ են պահում չատ ու չատ լաւ բաներ ու հասկացութիւններ եւ առաջին հերթին հայրենի հողի սրբազան զգացումը։ Եւ բոլորովին էլ այսօր հարկ չկայ աչք փակել օտարամուտ բաների առնլեւ, որոնցից մէկն էլ դրսեկ երաժշտութիւնն է։ Մի քանի տարի առաջ, երբ Երեւան եկած մեր հրատարակիչ գործընկերոջը երեկոյեան ռեստորան էինք հրաւիրել, անսովոր տեսարան ականատես եղանք։ Երա՝ ժիլտ կոչուածներն ամբողջ ուժով նուագում էին, իսկ ուժեղացուցիչները սրահը պայթեցնելու աստիճան ծըչում էին «Զինգիզ խան», Զինգիզ խան»։ Երիտասարդները անզուսպ պարում էին. չմտածելով անգամ, թէ դրեր առաջ իրենց ժողովրդին եւ միւս ժողովուրդներին ու նաեւ Ռուսիային ինչպիսի՛ զարհուրելի աղէտներ բերեցին Զինգիզ խանի վարձեի հորդաները։ Այո, թշնամական անունը ոչ միայն ատելութիւն չէր առաջացնում, այլեւ պարի էր մղում։ Իսկ հայրենի հողին այնքան աղէտներ բերած թշնամին միշտ էլ թշնամի է մնում. Այդպիսի բաների համար ժամկէտի վաղեմութիւն չըկայ։ Լաւ է, որ այդ երեւոյթի դէմ իր վճռական ձայնը բարձրացրեց եւ մեր սիրելի «Ոզնին» ու որքան ինձ յայտնի է, այդ դաժան՝ ու վնասակար երգի ձայնը կտրուեց մեր հասարակական կեանքում եւ ոչ էութիւն, ինչպէս նախկինում էր։ Այդպէս է, կապն ու հարազատութիւնն ընդհատուելը

ՕՐԸ ՕՐԻՆ

Ո՞ւր պէտք է շինուի Լեհինականը

Գարունը կը խայտայ Հայաստանի մէջ, եւ բնութիւնը – թէեւ վիրաւոր – նոր յոյս եւ նոր կեանքի կարելիութիւններ կը սփռէ ամէնուր: Շուտով, եկող ամիսներուն, պիտի վերաշինուի հիւսիսային Հայաստանը, օճախները վերստին պիտի բոցկլտան, կեանքը բնականոն հունն պիտի մտնէ, եւ հետզհետէ տխուր յուշ պիտի դառնայ Դեկտեմբեր Ը-ի երկրաշարժաղէտը:

Բայց իրա՞ւ է այս պատկերը:

Դժբախտաբար ոչ:

Այո, գարունը հոն է, եւ սակայն հոն են նաեւ կործանումը, աւերը, կսկիծները, անվերանորոգ կեանքերը: Հոն են մօտ կէս միլիոն զոհեալները, հոն՝ Աղէտզեալները 190,000 հայորդիները· տուն չկայ, գործ չկայ: Ընտանիքները կոտորակուած են, տասնեակ հազարներ՝ հողին տակ կամ ճզմուած-կորսըսած աւերակներուն մէջ:

Մեծ բացական Ցոյն է:

Եւ այսօր, գաղթական հայը – ինչպէս եւ Հայաստանի բոլոր բնակիչները – իրենք զիրենք կը գտնեն նոր վրտանէի մը առջեւ:

Ո՞ւր վերակառուցանել նոր Լենինականը:

Աւերուած քաղաքը այժմ գրեթէ «մաքրուած» է փլատակներէն· պայթեցուած եւ անհետացուած են մեծ թիւով բազմայարկ չէնքեր՝ որոնք, ամբողջութեամբ փլած չըլլալով հանդերձ անբնակելի էին: Այսպէս, Լենինականի գրեթէ ութսուն առ հարիւրը ա՛լ գոյութիւն չունի: Հայ թէ օտար մասնագէտներ համոզուած են թէ հին քաղաքը բազմամարդ եւ բազմաչէնք պիտի չէ ըլլայ, քանի ան կը գտնուի երկրաշարժային շատ գործօն գօտիի մը մէջ, եւ կը հանդչի մակերեսի մը վրայ որուն խորը ջրային ընդարձակ աւազաններ են: Եւ այս ջուրն է որ իրմէ վեր գտնուող կաւային եւ աւազային խաւերը հետզհետէ կը հալեցնէ, «խախտելով» անոնցմէ վեր գտնուող հողաչերտերուն հաւասարակշռութիւնն ու ամրութիւնը, դիմացկունութիւնը: Ա՛լ կրնաք հետեւցնել թէ խորխոթ-անկայուն այդ մակերեսին վրայ կառուցուած բազմայարկ չէնքերը որքա՛ն դիմադրողական ուժ կրնան ունենալ երկրաշարժային ցընցումներու պարագային:



Հետեւաբար, եթէ պէտք է կանխատեսնուին եւ կանխարգիլուին ապագայ ողբերգութիւնները – երկրաշարժ մը միշտ հաւանական է այդ շրջանին մէջ, եւ Դեկտեմբեր Ը-ի վերաւելի քան 3,000 զանազան ուժգնութեամբ ցնցումներ արձանագրուած են հոն – այն ատեն նուազ խիտ եւ ցած չէնքեր պահելով հանդերձ Լենինականի ներկայ տարածութեան վրայ, քաղաքը պէտք է վերաշինել տարբեր վայր մը:

Բայց ո՞ւր:

Ահա այս շատ կարեւոր հարցին մասին էր որ վերջերս «Պայքար»ի եւ «Արմինիոն Միրոյր–Սիէքթէյթըր»ի խմբագիրներուն հետ տեսակցութիւն մը ունեցաւ Փրոֆ. Միսաք Եղիայեան, Գիստոնի Նորթիսթըրն համալսարանի քաղաքային ճարտարագիտութեան ամպիոնի վարիչը, որ շատ ծանօթ եւ կարող մասնագէտ մըն է երկրաշարժագիտութեան: Ան Մարտին Հայաստանի աղէտեալ շրջանները այցելեց, հրաւիրուած ըլլալով Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային եւ Երեւանի Փոլիթեքնիք Ինստիտուտին կողմէ:

Տոքթ. Եղիայեանի եզրակացութիւնները բաւական ծանրակչիռ են եւ պէտք է մտահոգեն բոլորս, ի մասնաւորի Հայաստանի կառավարութիւնն ու գիտնականները:

Ըստ իրեն, եթէ անմիջական քայլեր չառնուին մասնաւոր Լենինականի վերաշինութեան գործին մէջ, ապագայ աղէտներ աւելի՛ հաւանական պիտի դառնան: Պիտի ջանամ այս բարդ ու խրթին հարցը կարելի պարզութեամբ բացատրել:

Հայաստանի գիտնականներն ու ժողովուրդը Լենինականի շինութեան վայրին մասին հակադիր երկու տեսակէտներ ունին: Առաջին տեսակէտը կը պնդէ որ քաղաքը պէտք է շինուի ներկայ վայրէն դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւմուտք, իսկ երկրորդը կը նախընտրէ տարածուիլ դէպի հարաւ:

Դէպի հարաւ՝ Լենինականէն անմիջապէս դուրս՝ բլրաշարքերն ու լեռները կը սկսին, ժեռուտ զանգուածները, ուր քաղաքամասեր կառուցելը շատ դժուար եւ բազմածախս է: Իսկ դէպի հիւսիս կը փռուի Շիրակի պատմական բերրի դաշտավայրը, որ մեր պատմութեան նախաօրերէն ի վեր կերակրած է հայ ժողովուրդը:

Հոն կառուցելը դիւրին է, արագ եւ անհամեմատօրէն նուազ ծախսալից, որովհետեւ լեռներ եւ քաղաքներ չկան, հիմերը դիւրաւ կարելի է փորել, չէնքերը մէկը միւսին եռեւէն բարձրացնել:

Սակայն այս դիւրին եւ ածան կառուցումի փայլուն հեռապատկերին դիմաց պէտք է զետեղել միւսը՝ Շիրակի դաշտի արգաւանդ հողին փճացումին սարսափը: Ներկայ Հայաստան Շիրակի՛ն կ'ապաւինի եւ անոր բերքերուն· սակաւահող մեր ափ մը երկրին մէջ, Շիրակէն զատ կայ միայն երեւանի արեւմուտքը տարածուող Արարատեան բերրի դաշտավայրին մէկ փոքր մասը միայն, որուն բերքերը հագիւ թէ կրնան մասամբ կերակրել հակայ Երեւանի ամեղ բնակչութիւնը: Ուրեմն, իւրաքանչիւր թէկուզ մէկ տոկոսի մը արձագանգ ունեցող Շիրակի մեր սրբազան հողը: Մեր ինչի՞ն ապահովելով: Մեզ քիչ մը աւելի դնելով օտարէն մեր հացն ու բանջարեղէնը ապընկալելու ահաւոր վիճակին մէջ:

Բայց մենք այս երկու տեսակէտներու պաշտպանները կը վիճաբանէին, Մոսկուայի Խորհրդային կառավարութիւնը արդէն իսկ իր վճիռը տուած էր ի նպաստ առաջինին, եւ ահա հազարաւոր օտար գործաւորներ անցած են Շիրակ, կը փորեն սուրբ հողը, հիմերը կը նետեն եւ չուտով, չա՛տ չուտով չէնքերը պիտի սկսին բարձրանալ – նոյն միակերպ, անհաճոյ եւ հապճեպով կառուցուած բնակարանները, եւ ո՛չ ոք պիտի գիտնայ թէ անոնք աւելի դիմացկուն պիտի ըլլա՞ն նոր ցնցումներու պարագային:

Եւ իրապէս, այս վերջին պարագան է որ մեծագոյն մտահոգութիւնը պէտք է պատճառէ բոլորին: Որովհետեւ Խորհրդային կառավարութիւնը, Լենինականն ու միւս վայրերը երկու տարուան մէջ վերակառուցանելու իր հրապարակային խոստումը պահելու ճիգին մէջ՝ կ'ուզէ որ ի գին ամէն ինչի այդ ժամկէտը իրականացուի· հետեւաբար զանց կ'առնուին հիմնական մտահոգութիւններ եւ նախաըզգուշական միջոցներ, որոնցմէ կարեւորագոյնն է՝ գիտական գնումը ենթահողի կայունութեան: Շիրակի դաշտավայրը եւս կը գտնուի ջրային զանգուածներու, կաւային եւ աւազային շերտերու վրայ, հետեւաբար ենթակայ է տարածքային փոփոխութիւններու, ներքին փլուզումներու, տեղաշարժներու՝ որոնք մեծապէս կրնան վնասել մակերեսին վրայ գտնուող շինութիւններուն: Եթէ Դեկտեմբեր Ը-ի երկրաշարժը բացառիկ կերպով աղիտալի եղաւ, այդ բանին մէջ մեծ դեր ունէր այն իրողութիւնը, որուն համեմատ կաւաքարէն ու աւազաշերտերը ջուրին կողմէ ծծուած-հալեցուած ըլլալով, հողի գանգուածները ձգած էին առանց պաշտպան հիմի ու հետեւաբար շատ աւելի ենթակայ՝ երկրաշարժի ցնցումներուն արհաւիրքին:

Ուրեմն, պարզապէս ապագայ նոր եւ նոյնքան սարսափելի արհաւիրքներ պատրաստել կը նշանակի Շիրակի դաշտավայրին մէկ կառուցանել նոր Լենինականը, առանց հիմնական եւ մանրակըրկիտ քննութիւններ կատարելու ընդերքին: Շէնքերը բարձրացնելէ ե՞տք այդ աշխատանքը պիտի տարի՞...:

Մեր առջեւ երկու կարեւոր հարցեր կան· ընդերքին կայունութիւնը, եւ սրբազան հողին կորուստը:

Վերջերս Հայաստանէն եկած լրատուութիւն մը կը կարդայի, ուր չեմ գիտեր մեր ո՛ր նախարարը կը վրատտահեցնէր թէ տեղահանուող հողերը կը փոխադրուէին երկրին ուրիշ վայրերը: Փորձառութեամբ գիտեմ թէ չատ հաւատք պէտք չէ ընծայել նման հաւաստումներու, եւ ապա, Շիրակի հողը հո՛ն, այդ հարթավայրին վրա՛յ բերրի է, արգաւանդ, հարուստ:

(ՏԱՐ.Ը 14-ՐԴ ԷՋ)

La clásica cocina francesa
con un toque oriental
Au Bon Air
Cocina personalizada de
Fereydoun Kia
Tres Sargentos 496 - (1054) - Buenos Aires - Argentina
T.E.: 313-2135

UNIFORMES COLEGIALES
ELMAYAN

BLAZERS
PANTALONES
JUMPERS
765-5293
Calles 53 BOULOGNE

REPUESTOS Y ACCESORIOS
— PEUGEOT —
TATEOSSIAN Hnos. S.A.
IMPORTACION - EXPORTACION
FABRICACION
BUJIAS EYQUEM
CABELLO 3363/65
1425 BUENOS AIRES - REP. ARGENTINA
T.E.: 801-3952/8959
801-3957/6634

(ՇԱՐ. 18-ՐԴ ԷՋԷՆ)

Տոքթ. Եղիայեան պատմեց թէ ինչպէ՛ս երբ կ՚այցելէր Մարմաշէնի շրջանը՝ Լենինականի հիւսիս-արեւմուտքը, դէպի ուր պիտի ուղղուի ապագայ շինարարութիւնը, յանկարծ նշմարած էր որ բլրակողի մը վրայ ճեղք մը գոյացած էր.՝ աւելի մօտէն գննելով, տեսած էր որ երկրաշարժին հետեւանքով իր ուղղութիւնը փոխած ջուրի հոսանք մը արդէն սկսած էր արագօրէն «ուտել»-հալեցնել-լուծել մակերեսի հողաշերտէն անմիջապէս վար գտնուող աւազախաւերը, կաւերը, այդ շրջանին մէջ շինութիւնները բոլորովին անկարելի դարձնելով։ Այդպէս ալ ըսած էր Հայաստանի պատասխանատու մասնագէտներուն։ Այդ զգուշացումը պիտի յարգուի՞։ Ու՛չ ոք գիտէ։

Նոյն ձեւով, Սպիտակի մօտ ան գտած էր վայր մը, ուր, ջուրի շարժումներու եւ լուծոյթներու պատճառաւ հողին մակերեսէն դուրս «ժայթքած» էր՝ աւազը, բոլորշի շերտ մը ստեղծելով։ Տակաւին շաբաթ մը առաջ Հայաստանեան թերթի մը մէջ կը կարդայի թէ Արագածի լանջերուն վրայ տեսնուած էր բարձրացող շոգի, եւ լսուած էին լերան ընդերքէն հասնող խուլ ձայներ։ Երեւանէն հասած գիտնականները գտած էին որ երկրաշարժին պատճառով ճեղքուածներ գոյացած էին, ուրկէ կարելի էր տեսնել թէ ինչպէ՛ս իրենց հին ներքին հունը կորսնցուցած ջուրի հոսանքները գոռոցով կը խուժէին մէկ անցքէն միւսը, նոր ուղիներ գտնելու համար։

Հայաստանի այդ շրջանը – եւ ապահովաբար ամբո՛ղջ Հայաստանը – ներկայիս ներքին հսկայական եւ տեւական շարժումներու մէջ է. երկրաշարժային ցնցումները պիտի շարունակուին գալիք տարիներուն, մինչեւ որ ընդյատակեայ վերիվայրումները հանդարտին, նոր գոյացումները իրենց խարիսխը գտնեն, համեմատական կայունութիւն գոյանայ։

Հետեւաբար, մասնաւորապէս հիմա՛ շատ զգոյշ պէտք է ըլլալ քաղաքներու եւ գիւղերու վերաշինութեան գործին մէջ։ Այո՛, ձմեռը շուտով վրայ կը հասնի եւ գաղթականները պատսպարանքի պէտք ունին։ Սակայն նախընտրելի է կրել երկրորդ խստաշունչ ձմրան մը դառնութիւնները, քան թէ ենթակայ ըլլալ հաւանական աղէտի մը կրկնումին։

Բայց ամէն բանէ վեր՝ Լենինականը պէտք չէ՛ կառուցուի ի վնաս Շիրակի արգաւանդ ու բերրի դաշտավայրին։ Նման բան մը ոճիր է գործուած հայ ժողովուրդին դէմ, անոր ներկային եւ ապագային դէմ։ Եւ աժան ու դիւրին կառուցուող շէնքերը չէ՛ որ արդարութիւն պիտի ընեն զոհուածներու յիշատակին։

Պէտք է խօսի՛ն Հայաստանի գիտնական մասնագէտները, մտաւորականները։ Իր մտահոգութիւնը հատու բառերով պէտք է յայտնէ Հայաստանի կառավարութիւնը։

Նոյնը պէտք է ընէ նաե՛ւ արտասահմանի հայութիւնը։

Շիրակը պէտք չէ՛ սպաննուի։

Եւ անոր սպաննութեամբ՝ պէտք չէ ապահովուի բազմահազար հայերու նոր մարտիրոսացումը։

ԱՐԱՑ ԳԱԼԱՑՃԵԱՆ

Կարծիքներ Ծիծեռնակաբերդի բարձունքէն

Ապրիլ 24ին առթիւ առաջին անգամ ըլլալով «կենդանի» վկայութիւններ կը տրուին Ծիծեռնակաբերդէն։ «Արմէնփրէս»ի թղթակից Վանիկ Սանթրեան հարցումներ ուղղած է դէպի Ապրիլեան Յուշարձանը բարձրացող կարգ մը դէմքերու, եւ «Ծիծեռնակաբերդի բարձունքից հաղորդումը վարած» է։ Ստորեւ կարգ մը պատասխանները։



Բանաստեղծ **ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ** - Ցաճախ առիթ է լինում լսելու.– իսկ արժէ՞ արդեօք, մարդկանց հոգիները փորփրել ողբերգութեան մասին յուշերով։ Բայց չէ՞ որ թէկուզ մէկ մարդու կորուստը համամարդկային կորուստ է։ Իհարկէ, եթէ մարդկութիւնը մի պահ զըրկուէր իր արատներից, աշխարհում չլինէին դաժանութիւններ, խարդախութիւններ, տառապանքներ ու վիշտ։ Հազիւ թէ խելացի լինէր այն մարդը, որն իրեն ու մերձաւորներին անհանգստացնում է դառն անցեալի յիշողութեամբ։ Բայց, աւա՜ղ ... այդ պատճառով էլ անհրաժեշտ է լինում հետեւել վաղուց յայտնի ճշմարտութեանը՝ յանցագործութիւնը սպառնում է կրկնուել, եթէ այն հասարակութեանը մինչեւ վերջ յայտնի չի դարձել։ Պատահական չէ, որ շատերը տանում են ցուցատախտակներ, որոնց էութիւնն է՝ Խ. Միութեան Գերագոյն Խորհրդի կողմից ճանաչել ու դատապարտել հայերի 1915 թուականի ցեղասպանութիւնը։

Արձակագիր **ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ** - 1965 թուականին մենք պետականօրէն առաջին անգամ ՚նշեցինք 1915–1918 թուականների հայ ժողովրդի ցեղասպանութեան սգոյ հանդէսը, ցեղասպանութիւն, որ կատարեց Օսմանեան Թուրքիան, իր բարբարոս էութեամբ։ Այդ 1965 թուականից սկսած ամէն տարի մեր ժողովուրդը հաւաքւում է Ծիծեռնակաբերդի Եղեռնի Յուշարձան-Համալիր մօտ, իր յարգանքի տուրքն է տալիս մեր զոհուած երկու միլիոն հայ զաւակներին, հայ մարդկանց։ Բայց պիտի ասեմ, որ այսօրուայ սգոյ հանդէսը բացառիկ բարձր որակ ունի եւ բարձր նշանակութիւն։ Մեր այս համալիրի մօտ այժմ գտնւում է նաեւ Սումգայիթի զոհերի յիշատակին նուիրուած փոքրիկ յուշարձանը։ Այսօրուայ մեր պահանջն է, որ թէ աշխարհի բոլոր պետութիւնները, թէ Խորհրդային Պետութիւնը ընդունեն 1915 թուականի Ցեղասպանութեան փաստը եւ դատապարտեն այն։ Ողջո՜յն հայ ժողովրդին աշխարհի բոլոր ծայրերում, որ ամէն տեղ նշում է այսօրը։ Բոլորդ եղէք մի հաւատով, որ հայ ժողովուրդը ապրել է, ապրում է, եւ պիտի ապրի։

Բանաստեղծուհի **ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ** - Արդէն քան տարի է, որ մենք գալիս ենք Ծիծեռնակաբերդի բարձունք, գլուխ խոնարհելու մեր զոհերի յիշատակին։ Սակայն այսօր ամենահոծ բազմութիւնն է, որ եկել է այստեղ, եւ դա բնական է, քանի որ նախ մեր վիշտը կրկնապատկուել, բազմապատկուել է ղարաբաղեան շարժման յուզումներով, երկրաշարժի աղէտաւոր հետեւանքներով, ու բնական է, որ այդ հոծ լինելը պէտք է աւելանայ։ Չմոռանանք նաեւ, որ պաշտօնական այսօրուայ գրանցումը մեր հայրենիքի պատմութեան մէջ ունեցաւ իր դերը, եւ մնում է, որ մենք ոչ միայն սգի օրերին այսպէս միասին լինենք, միասին լինենք եւ միւս օրերին, լի օրերին, որովհետեւ հարկաւոր է, ոը ամէն մի սուգ մեզ համար դառնայ կեանքի ակունք, կենսահաստատութեան ուժ եւ մեզ ներշնչի, որ մենք ոտքի կանգնենք, կառուցենք, յարատեւենք։

Նկարիչ **ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ** - Հայաստանի Գերագոյն Խորհրդի ընդունած օ-

(ՇԱՐ. 15-ՐԴ ԷՋ)

Ուրմիոյ (Պարսկաստան) թուրք պաշտօնատարին բնակարանը յարձակման կ՚ենթարկուի

Ապրիլ 24ին, Պարսկաստանի Ուրմիոյ շրջանի Թըրքական հիւպատոսարանի վարչական հարցերու կցորդ Սելամի Տէմիրպասի բնակարանը անծանօթ զինեալներու կողմէ յարձակման թիրախ ենթարկուած է։ Հակառակ անոր որ Թուրք պաշտօնատարն ու ընտանիքը յարձակման պահուն տունը կը գտնուէին, որեւէ մէկուն վնաս հասած չէ։

Ցատկապէս վերջին շրջանին, Թուրքիոյ եւ Իրանի յարաբերութիւնները վատթարացած են, նկատի ունենալով որ Թրքական գերագոյն ատեանին կողմէ որդեգրուած որոշումի մը դէմ արտայայտուած էր Իրանը, երկրի տարածքին խլամ ծայրայեղականները դրդելով։

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարները մերժեցին որեւէ արտայայտութիւն ունենալ, թէ ովքեր կրնան ըլլալ յարձակումի հեղինակները, սակայն իրենց ինքնութիւնը անծանօթ պահել փափաքող պաշտօնատարներ ըսած են, թէ իրենց ենթադրութիւնը այն է, որ «աբարքին կանգնողները հայ ահաբեկիչներ» են։

Գործողութիւնը զուգադիպած է Հայկական ցեղասպանութեան տարեդարձի նշման՝ Ապրիլի 24ի օրուան։

PROFESIONALES

MEDICOS

Dra. Azaduhi Libertad Telecemian de Anger
Médica - Psicoanalista
Miembro adherente de la Asociación Psicoanalística Internacional
Tratamiento de Familias, Parejas, Adolescentes y Adultos.
Billinghurst 1663 P.B. D — TE. 826-9267 91-8332

ESCRIBANO

GREGORIO HAIRABEDIAN
ESCRIBANO
Av. Roque S. Peña 570 — 331-5761 34-1579

Para las cuatro estaciones
y todas las edades
Lanas "Hetesia"

Merceril S.A.
Larrea 237. Capital
T.E.: 48-9343

Թունաւորում Հայաստանի Հիւսուածեղէնի Գործարաններուն Մէջ

Աշխատաւոր Մը Կը Մեռնի. Հարկերը Եկած Էին Ատրպէյճանէն

կարծիքներ

ՄԻՏԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԲԱՐՁՈՒՆԴԷՆ

(ՇԱՐ. 14-ՐԴ ԷՋԷՆ)

րչնքը սրանից 70 տարի առաջ պիտի ընդունուէր – յա՛ւէ, որ եղաւ, կ'ելնէ ուշացումով: Բայց մեր ժողովուրդը միշտ իր մէջ պահել է այդ զգացումը, որովհետեւ դա նրա մեծ փափաքն էր: Մենք միշտ պիտի յիշենք մեր Եղեռնի Օրը: կարծում եմ, որ սա մեր պատմութեան տխրութեան եւ սարսափի օրն է, բայց մենք պիտի նաեւ մեզ համար ըստեղծենք յաղթանակի օրեր, եւ վստահ եմ, որ մեր ժողովուրդը այդ բանին պիտի հասնի:

ԳՈՒՐԳԷՆ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ - (Արցախէն՝ բանաստեղծ, երգիչ, երգահան) – Արցախ աշխարհի աշխատաւորութեան անունից ես ողջունում եմ Խորհրդային Հայաստանի ընդունած այդ օրէնքը: Իմ կեանքում առաջին անգամ ես մասնակցում եմ այս երթին եւ մէկ անգամ եւս համոզուեցի, որ մենք ամէն ինչում ենք միասնական՝ եւ ազի մէջ, եւ ուրախութեան մէջ: Թող մեր թարմ ծաղիկները զարդարեն Եղեռնի զոհերի պայծառ յիշատակը, որոնք անմեղ զոհ գնացին: Բայց յաւերժ ապրում են մեր մէջ բոլոր ժամանակների հայ զոհերը, 1915 թուականի հայ զոհերը, Սումգայիթի հայ զոհերը:

Բռնձքամարտիկ ՎԱՉԱԳԱՆ ՄԻՐ ԵՆԳԻԲԱՐԵԱՆ - (աշխարհի եւ Ողիմպիական խաղերու ախոյեան) – Նախախմումը ինձ լոյս աշխարհ է բերել Ապրիլի 24ին: Եւ ամէն տարի իմ ծննդեան օրը նշելուց առաջ ես այստեղ եմ գալիս, գալիս եմ իմ ընկերներով Մխիթարեանբերդ: Ապա տանը, հասաքելուց յետոյ նախ եւ առաջ՝ լուսթեամբ յարգում ենք մեր զոհերի յիշատակը: Երբէք ես կարղացի հրապարակուած օրէնքը, լաւ գիտէք, այսօր կարծես փոքր ինչ՝ թեթեւ չնչառութեամբ ասեմ, թէ ինչ, դրանով բարձրացայ Մխիթարեանբերդ: կարծես մի ծանր քար էր ընկել իմ ուսերից, հայ ժողովրդի ուսերից: Սա գալիս է վաստելու, որ արդարութիւնը չես կարող բանտել. ահա այսօր այս մտքերով, այս խոհերով եկայ Մխիթարեանբերդ:

Թունաւորումի նոր ծանր դէպքեր պատահած են Հայաստանի հիւսուածեղէնի «Ամուշ», «Անահիտ» եւ Ջեռնոցի միաւորումներուն մէջ: Հիւանդանոց փոխադրուած են 54 թունաւորուած աշխատաւորներ, որոնցմէ մէկը մեռած է: Հիւսուածեղէնի թելերուն հարկերը ներածուած էին Ատրպէյճանէն:

Պաշտօնական առաջին քննութիւնները ցոյց տուած են թէ մանուածքի նմուշներուն մէջ գտնուող թոյները մաս չեն կազմեր թելերու քիմիական բաղադրութեան, այլ անոնք աւելցուած են Հայաստան ղրկուած հարկերուն մէջ:

Հայաստանի Համայնավար Կուսակցութեան քաղաքական դիւանը այս առթիւ ունկնդրած է հանրապետութեան դատախազութեան, հիւսուածեղէնի գործարաններու տնօրէնութիւններուն եւ առողջապահութեան նախարարութեան վկայութիւնները:

Ինչպէս գիտէնք, այս դէպքերը թունաւորման առաջին երեւոյթները չեն Հայաստանի հիւսուածեղէնի գործարաններուն մէջ: Անցեալին «Մասիսի» միաւորումին մէջ եւս պատահած էին հասարակական թունաւորման դէպքեր:

Խնդիրը այն է, որ ցարդ Երեւանի պատկան մարմինները չհրապարակեցին քննութիւններուն արդիւնքները, ոչ ալ մասնանչեցին յանցաւորները:

Այս մասին Քաղաքական Դիւանը հանրապարար համրեց, կ'ըսէ «Արմէնփրէս», թունաւորումներու շարունակ կրկնուող դէպքերու պատճառներուն քննութեան եւ մեղաւորներու յայտնաբերման աշխատանքի ընթացքը»: Ուրեմն Քաղդիւանը քննադատած է հայկական հետախուզական-իրաւապահ սպասարկութեան (ոստիկանութիւնը), առողջապահական նախարարութեան, հիւսուածեղէնի եւ պետական սպասարկման պատասխանատու մարմիններուն «անվճռականութիւնն ու դանդաղկոտութիւնը՝ թունաւորումներու դէպքերու կանխման գործին մէջ»: Քննադատուած են նաեւ հիւսուածեղէնի վերոյիշեալ միաւորներուն տնօրէնութիւնները, որոնք պատշաճ զգօնութիւն ցոյց չեն տուած, եւ թունաւորման առաջին իսկ դէպքերէն յետոյ նախազգուշութեան վճռական եւ անյետաձգելի միջոցներու չեն ձեռնարկած»:

Մինչ կողմէ Քաղդիւանը իրաւապահ մարմիններէն պահանջած է արագացնել քննութիւնները եւ յանցաւորները ենթարկել արդար պատասխանատուութեան, Նախարարների Խորհուրդը յանձնարարած է «արդիւնաբերական ճեռնարկութիւններու մշտական հսկողութեան տակ առնել աշխատանքի պայմանները, անվտանգութեան միջոցները, հումքի եւ ներքերու պահպանման եւ օգտագործման վիճակը»: Ու նկատի առնելով հարցին սուր բնոյթը, որոշած է ստեղծել յատուկ յանձնաժողով, կենտկոմի Քարտուղար Մ. Սերոբեանի գլխաւորութեամբ: Յանձնաժողովին մաս պիտի կազմեն փոխ-վարչապետ Լ. Սահակեան, Ա.Մ.Ն.-ի նախագահ Մ. Ցարուքիւնեան, Քկեղ-ի ղեկավար Վ. Բաղմանեց, ժողովրդական վերահսկողութեան կոմիտէի նախագահ Գ. Մարտիրոսեան, Դատախազ Վ. Նազարեան, Ներքին Գործոց Նախարար Ց. Յարութիւնեան, Թեթեւ արդիւնաբերութեան նախարար Ռ. Մկրտիչեան, առողջապահական փոխնախարար Ու. Գօդոսեան եւ այլ անձեր:

Յանձնաժողովին յանձնարարած է «Խորպակս ուսումնասիրել թունաւորումներու տեղ գտած փաստերը, ճեռնական ֆայլերու ճեռնարկել այդ երեւոյթներու աղբիւրներն ու պատճառները շուտափոյթ ի յայտ բերելու համար, մշակել եւ իրականացնել այնպիսի միջոցառումներ՝ որոնք այսուհետեւ բացառեն արտադրութեան մէջ մարդոց թունաւորումներու դէպքերու կրկնութիւնները: Ու նաեւ՝ Յանձնաժողովի աշխատանքը իրականացնել լայն հրապարակայնութեան պայմաններուն մէջ, արդիւնքներու մասին սիստեմատիկաբար տեղեկացնել աշխատաւորական կոլեկտիւներուն, ինչպէս նաեւ հանրապետութեան հասարակայնութիւնը: Այդ նպատակով ակտիւօրէն օգտագործել աշխատաւորներու հետ հանդիպումները, մասսայական ինֆորմացիայի միջոցները, կազմակերպել Յանձնաժողովի անդամներու ելոյթներ հեռուստատեսութեամբ»:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

Հանդիսութիւն՝

Նուիրուած ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ճակատամարտի 71-րդ Տարեդարձին

Խօսք Կ'առնեն՝

Արժանապատիւ

Տ. Արշամ Աւագ Քահանայ Պոզոյեան

(Հոգեւոր Հովիւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ)

Օր. Մարթա Փոժի

(Տնօրէն Մարի Մանուկեան Կրթ. Հաստատութեան Երկրորդական Բաժինի)

Ելոյթ կ'ունենայ Միութեան «ՇՆՈՐՀԱԼԻ») Երգչախումբը

Ղեկավարութեամբ

Տիկ. Տիանա Գաբրիէլեան Սարաֆեանի

Երեքշաբթի Յունիս 18-ին, ժամը 21.00-ին

ՄԻՈՒԹԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

ՇԱՆՈՒՑՈՒՄ

Յունիս 4-ին կիրակի, Հովանաւորութեամբ թեմիս Բարեջ. Առաջնորդ Գեր. Տ. Գրիգորիս Սպս. Բունիաթեանի պիտի կատարուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ տարեկան տօնակատարութիւնը: Այդ առթիւ պիտի պատարագէ եւ քարոզէ Առաջնորդ Սրբազանը:

Ս. Պատարագի աւարտին պիտի կատարուի Հոգեհանգիստ գաղութիս հանգուցեալ բարերարներու հոգիներուն համար եւ տեղի պիտի ունենայ Մատաղի օրհնութիւն:

Արարողութեանց աւարտին բոլոր հաւատացեալները միասին Հայ Կեդրոնի սրահին մէջ պիտի ճաշակեն օրհնուած մատաղը:

Ստորեւ կը ներկայացուի բարերարներու ցանկը:

Գարեգին Արք. Խաչատուրեան, Բարգէն Արք. Ապատեան, Երուանդ Խաչիկեան, Իսրայէլ Արսլան, Հրանդ Նիքոթեան, Արմէն Պերկամալի, Յովհաննէս Տիրայէքիրեան, Սարգիս Տիրայէքիրեան, Պօղոս Արզումանեան, Կոպէնհիկ Սեֆէրեան, Արտաշէս Սեֆէրեան, Քաթլին Սեֆէրեան, Գէորգ Վարդապրոնեան, Գէորգ Շընճոզեան, Վահէ Շընճոզեան, Շիւտա Եսայեան, Յովհաննէս Մարկոսեան, Երուանդ Միւրէքեան, Տիգրան Միւրէքեան, Սահակ Պաղչէճեան, Աւետուր Գարակէօզեան, Երուանդ Դերձակեան, Մարիանա Գույումճեան, Ռուբէն Տէր Կարապետեան, Երուանդ Քօրուք, Յակոբ Սէրյակորեան:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀՈԳԵՇԱՇԸ

Կազմակերպուած՝ Արծրունի Ազգային Վարժարանի շրջանաւարտ Ընրակազմ Միութեան, եւ հովանաւորուած՝ Հաստատութեան Հոգաբարձութեան, կրօնական արարողութենէ վերջ, տեղի պիտի ունենայ Կիրակի Յունիսի 11-ին, Եդ. Պօյաճեան սրահին մէջ, ի պատիւ Տայրագոյն Վարդապետ Դաշնեան մահուան 25-ամեակին առթիւ:

Ծ. Վարդապետ Դաշնեան եղած է Վարագայ Ս. Խաչ Եկեղեցւոյ եւ Արծրունի Ազգային Վարժարանի շինարար աշխատանքներու ոգին:

Ներկայս կը ծանուցանենք ի գիտութիւն իր յիշատակը յարգող գաղութիս բոլոր հայրենակիցներուն:

SINTONICE AUDICION CULTURAL TEKEYAN

La cultura y el quehacer de la armenidad

Domingos de 10,5 a 11 horas.

CX. 10 Radio Continente (Uruguay)

(735 khz. al lado de Radio Mitre)

Falleció en París Antranik Zaroukian

Con el fallecimiento de Antranik Zaroukian, ocurrido en París el martes 23 del corriente, se extingue la vida de un escritor, poeta y publicista que enalteció a la intelectualidad armenia.

Nacido en el año 1913 en el pueblo de Guiurin, Zaroukian realizó sus primeros estudios en el Colegio Haigazian de Alepo en el año 1928, continuando sus estudios en el Liceo Nishan Palandjian de Beirut.

Redactor del semanario literario "Nairí", de gran difusión en la diáspora, supo reflejar en todas sus obras -prosa y poesía- la vida de la generación sobreviviente del Genocidio, sus inquietudes y sus afanes. Brillante pensador de la vida armenia, supo comprender y comunicar la realidad de nuestro pueblo. Niño, él también, sin infancia dada su orfandad por culpa del Genocidio, uno de sus libros más brillantes fue "Hombres que no tuvieron infancia", escrito en 1952 y que alcanzó repercusión universal. En 1958 conoció por primera vez a Armenia y, bajo la impresión que la Patria causó en su ánimo, dió a la imprenta su libro titulado "Antiguos sueños, caminos nuevos".

De Zaroukian, y a manera de homenaje, publicamos su poesía de amor a Armenia "Promesa al Ararat", en traducción del Sr. Jorge Sarafian.

Promesa al Ararat

Hemos de llegar a tu cumbre, Sagrado Monte,
cuando el diluvio de las bombas llegue a su fin,
y los mares de sangre se vistan de púrpura;
cuando la sacrificada paloma de la Paz
vuelva... desde los abismos del terror,
con la rama pacífica del olivo en su boca,
hemos de llegar a tu cumbre.

Desde los campos, los caminos, las ciudades,
desde las sórdidas hondonadas de las deportaciones,
nuestras gallardas filas se rebelarán tempestuosas,
en defensa de los santos ideales de nuestros padres;
se destruirán todas las negras murallas
del destino, que no separan;
hemos de llegar a nuestros ríos, a nuestras tierras,
haciendo sonar el clarín del sagrado anhelo,
hemos de llegar aunque se desplomen los soles,
y los senderos se tornen infiernos de sangre...
Hemos de alcanzar tu cumbre...

Mira a nuestras filas, entusiastas y valientes,
mira a nuestra ansiedad con el ímpetu de Vahakn;
mira a nuestras almas límpidas como tus nieves,
y nuestra voluntad, resistente como tus rocas.
Y ten fe, ¡oh, Dios de granito!
ten fe, Sagrado Monte,
que nosotros llegaremos, llegaremos a tu cumbre.



COCINA



Sona de Guezikaraian

Lenguado al champagne

(4 personas)

INGREDIENTES:

4 filetes de lenguado, 100 grs. de manteca, 2 vasos de champagne, sal, papel manteca.

PARA LA SALSA:

1 yema, 50 grs. de manteca.

PREPARACION:

Untar con manteca una fuente pirex, acomodar en ella los lenguados. Rociar con champagne y condimentar. Colocar sobre esta preparación trozos de manteca y cubrirla con papel manteca, cerrando bien todos los bordes.

Cocinar a horno moderado durante 10 minutos. Servir con la salsa.

SALSA:

Colocar el champagne en una cacerolita, agregar la yema y, batiendo suavemente, cocinar durante 5 minutos a baño de María.

Retirar y agregar la manteca.

Escalopes de salmón a la crema

(4 personas)

INGREDIENTES:

4 rodajas de salmón, 100 grs. de almendras molidas, sal, pimienta, 150 grs. de manteca, 200 grs. de crema de leche, 3 cucharadas de vermouth y 3 cucharadas de vino blanco.

prepara ɔn;

Moler *namente* las almendras, pas r las rodajas de salmón, p viamente condimentadas, p r las mismas, apretando b n para que se adhieran.

Cocinarlas en manteca caliente hasta que se doren de ambos lados. Retirar y colocar sobre el papel para que absorba la grasa.

Hervir el vermouth con el vino, agregarle la crema de leche.

Condimentar, distribuir en cuatro platos, y sobre dicha preparación colocar los escalopes.

Donación

Con motivo del 2° Aniversario del fallecimiento del Sr. Hagop Kardashian, familiares donan a SARDARABAD A 2.000

EL PROFESIONAL LOS RECETA
BARTAMIAN LOS DISEÑA
SU HIJO LOS PREFIERE
LINEA PIE/RECTOR
DE ORTOPEDIA
BARTAMIAN



CALZADO CORRECTIVO A PRUEBA DE CHICOS: CALIDAD Y DISEÑO

Calzado Correctivo

Calzado Deportivo

PLANTILLAS CORRECTORAS



Ortopedia Bartamian también las pone a sus pies.

ARTICULOS DE ORTOPEDIA EN GENERAL

Descuentos desde el 30% a Obras Sociales.
Consulte con su Obra Social sobre otros beneficios.

ORTOPEDIA OB
Bartamian
Av. Belgrano 1699 Tel. 45-5213 Bs. As.
Av. 7 N° 1134 Tel. 3-4935 La Plata

Dr. Arturo Balassanian
Escribano
Registro Notarial 1094
Florida 716 2° Piso - Of. "K"
T.E.: 322-2768

U.G.A.B. U.G.A.B.
12° JUEGOS NAVASARTIAN MUNDIAL
LIGA DE JOVENES
Buenos Aires - Agosto 15 al 20
El evento deportivo más importante del año
Basquet Masc. y Fem. - Volley Masc. y Fem. - Ping Pong - Fútbol
EE. UU. - Canadá - Francia - Inglaterra - Austria - Suiza - Holanda - Chipre
Líbano - Egipto - Siria - Grecia - Australia - Brasil

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL
TEKEYAN

Redacción y Administración
Cnel. Niceto Vega 4779
1414 - CAPITAL FEDERAL
T.E.: 771-2520
Horario de atención: *Lun. a Vie. de 10.00 a 19.00 hs*

Registro Nac. de la Propiedad Intelectual N° 78.836
Director
MIHRAN SARAFIAN
Corresponsalía, receptoría de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap. 84
Cep. 00579 - San Pablo
T.E.: 813-6731

URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
Montevideo